ռանդութեամբ մենք մտանք այդ վանքը եւ համբոյր մատուցեցինք մի մոռացոած գերեզմանի: Նրա մէջ հանգչում էր Աւարայրի հերոսների երգիչը՝ Եղիշէն:

Ոստանայ լեռնահովտի մէջ կայ մի այլ սրբավայր, որը նոյնքան սիրելի է ամէն մի հայի սրտին, որպէս վերոյիշեալ վանքը: Ծովեզերքից կէս մղոն հեռաւորութեամբ, կանաչազարդ, հարթ դաշտի մէջտեղում, բարձրանում է մի գեղեցիկ բլուր: Բարդի եւ ուռենի ծառերը իրանց վարսաւոր ճիւղերի ներքոյ հովանաւորում են շինականների խրճիթները, որ գտնւում են այդ բլուրի վրայ: Դա Նարեկ (Նոր-եկք) գիւղն է: Նա փոքրիկ է, բայց ամէն հայի համար նոիրական է, որովհետեւ ծննդավայրն է մի պաշտելի մարդու: Գիւղի մէջտեղում, բլուրի ուղիղ գագաթի վրայ, կանգնած է մի հոյակապ վանք: Բաւական հեռաւորութիւնից երեւում է այդ վանքը, եւ նրան տեսնելիս ճանապարհորդի սիրտը սկսում է բաբախել: Խորին, սրբազան ջերմեռանդութեամբ խաչակնքում է նա իր դէմքը եւ ծունր է խոնարհեցնում: Այդ վանքի մէջ դրած է հայոց ոգելից սաղմոսերգոի՝ ս. Գրիգոր Նարեկացու մարմարեայ գերեզմանը:

Այդ դաշտը եւ նրա շրջակայքը լի են այն բոլոր նոիրական տեղերով, որ կապոած են Նարեկացու յիշատակի հետ: Խարզիթ գիւղի մօտ, ծովափնեայ ճանապարհի եզրում, մեզ ցոյց տոին մի գոգաւորոած ժայռ: Այդ գոգաւորութիւնը մարդու մարմնի նմանութիւն ունէր: Նրա մասին պատմում էին, թէ Նարեկացին այստեղ հովիւ եղած ժամանակը՝ մի անգամ աւազակները յարձակոեցան նրա վրայ. նա փախաւ եւ դիմեց դէպի յիշեալ ժայռը, նրա մօտ պատսպարան գտնելու համար: Ժայռը բաց արեց իր քարեղէն գիրկը եւ ընդունեց սրբին:

Բայց բոլորից հետաքրքիր են այն քարանձաւները, որոնք մի ժամանսկ Նարեկացու ճգնարանն են եղել: Նարեկ գիւղից մի ժամ հեռաւորութեամբ, ծովեզրի մօտ, բարձրանում է մի այլ քարաժայռ: Նրա մէջ կան մի քանի մեծ եւ փոքր բնական այրեր: Բացի այդ բնական այրերից, նոյն բարձրադիր ապառաժի մէջ փորոած են թոով ինն սենեակներ: Այդ վիմափոր սենեակները անյիշելի ժամանակների գործ է: Նրանք երկու հարկերի են բաժանոած, որոնցից հինգը ներքին յարկն է կազմում, իսկ չորսը՝ վերին յարկը: Հայոց հին սորամուտների (տրոգլոդիտների) այդ քարեղէն բնակարանը այնքան անմատչելի, այնքան բարձր է գետնի մակերեւոյթից, որ Նարեկացու նման հրաշագործ անձը միայն կարող էր մուտք գործել այդտեղ: Գլխաւոր դուռը բացւում է ներքնայարկի առաջին սենեակի մէջ, եւ յետոյ մէջեմէջ դռներով տանում է դէպի միւս սենեակները եւ հանում է մինչեւ վերին յարկը: Իւրաքանչիւր սենեակ պատուհանաձեւ լուսամուտ ունի, որ նայում է դէպի